ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր
համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ, 4 շ., Հեռ. (094)
246414 , gcghadir.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

N 219
14 սեպտեմբեր 2021թ.

Հարգելի պարոն մարզպետ.

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 13-ի N 8 նիստի որոշումները:

Առդիր 8 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Մուրադյան
Հեռ. 077161037

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2021թվականի N 22-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով,համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել համայնքի ավագանու 2021թվականի սեպտեմբերի 13-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը՝
1)Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի աճուրդային հանձնաժողովի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին
2)Գեղադիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ
ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2021թվականի N 23-Ա

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հրապարակային սակարկությունների մասին>>օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 2004թվականի հուլիսի 8-ի 172-Ն հրամանով հաստատված աճուրդների անցկացման կանոնակարգը՝համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գեղադիր համայնքի աճուրդային հանձնաժողովի գործունեության կանոնակարգը՝համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գեղադիր համայնքի ավագանու 2021թվականի
սեպտեմբերի 13-ի թիվ 23-Ա որոշում

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի վարչական սահմաններում գտնվող,համայնքի սեփականությունը համարվող անշարժ գույքի (հետագայում՝գույք) աճուրդով օտարման աճուրդային հանձնաժողովի (աճուրդի կազմակերպիչ) գործունեության կանոնները:
2. Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ղեկավարը:
3. Աճուրդի կազմակերպիչը ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>> օրենքով,Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ավագանու որոշումներով,սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

II.ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդի դրված գույքի (գույքերի) համար սահմանվում է մեկ լոտ:
5. Աճուրդը անցկացվում է սակարկությունների ձևով,որի ընթացքում հաղթող ճանաչել այն մասնակցին,որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:
6. Աճուրդն անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիրի համայնքապետարանի շենքում (հասցեն Գեղադիր համայնք,4-րդ փողոց թիվ 4):
7. Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպվում և անցկացնում է չկայացած աճուրդի օրվանից 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքապետարանի շենքում (հասցեն՝Գեղադիր համայնք,4-րդ փողոց թիվ 4),որը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝սույն կանոնակարգի համաձայ
8. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակվում է նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում և (կամ) http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումներ պաշտոնական ինտերնետային կայքում՝աճուրդի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ:
9. Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում՝ և համայնքի մարդաշատ այլ վայրերում տեղադրվում է աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի կայացման վայրում՝ցուցատախտակի վրա:

10. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձանց,ինչպես նաև համայնքները:

11. Աճուրդի մասնակցության վճարը սահմանվում է 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

12. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք (դիտորդ),որոնք վճարել են մուտքի տոմսի վճարը: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար (դիտորդի) մուտքի տոմսի վճարը սահմանվում է 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

13. Աճուրդի մասնակիցները և մասնակիցը չհամարվող անձինք (դիտորդները), աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

14. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչնդոտել աճուրդի անցկացմանը և հետևել կանոններին՝

1) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցին,մասնակից անձի,աճուրդային հանձնաժողովի,կամ աճուրդավարի նկատմամբ
2) չխոսել աճուրդի ընթացքում,բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի
3) հարցադիմումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին լոտի աճուրդը սկսվելուց առաջ,կամ հետո,իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ
4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ առանց աճուրդավարի թույլտվության
5) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը (աճուրդի մասնակիցների համար):

15. Աճուրդի դրված գույքի մեկնարկային գինը հաստատվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ավագանու որոշումներով:

16. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5%-ի չափով:

17. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5%-ի չափով,վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:

18. Աճուրդի նախավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին՝աճուրդի անցկացման օրը:

19. Աճուրդում հաղթած են համարվում աճուրդի այն մասնակիցը,ով աճուրդավարի մուրճի 3-րդ հարվածից հետո աճուրդի դրված գույքի համար ներկայացրել է ամենաբարձր գնային առաջարկ:

20. Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը յուրաքանչյուր աշխատանքային օր՝ժամը 9:00-17:00-ն ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00-ն ընկած ժամանակահատվածի),Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքում 4-րդ փոոց թիվ 4 հասցեում:

21. Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Գեղադիրի համայնքապետարանում՝մինչև աճուրդի կայացման նախորդ օրը ժամը 9:00-ն:

22. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ ատաջ աճուրդային հանձնաժողովը աճուրդի կազմակերպչի լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմանը թույլատրում է մասնակցել աճուրդին:

23. Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն,որը ստորագրում են՝աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները,աճուրդի հաղթող մասնակիցը,ցանկության դեպքում աճուրդի մյուս մասնակիցները:

24.Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

25.Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է և գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է աճուրդի-կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

26.Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայմանագիրը չկնքելու և (կամ) գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե:

27.Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված և գույքը գնած մասնակցի կողմից:

28.Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին (մասնակիցներին) վերադարձվում է նախավճարը:

29.Աճուրդի մասնակցության հայտերը ընդունվում են մինչև աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող երրորդ աշխատանքային օրը՝յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 9:00-17:00-ն ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի),Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնքում, 4-րդ փողոց թիվ 4 հասցեում,աճուրդային հանձնաժողովի կողմից:

30.Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1/ հայտ՝սահմանված ձևանմուշով

2/ ֆիզիկական անձանց համար՝անձնագրի պատճեն

3/ իրավաբանական անձանց և համայնքների համար ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը

4/ նախավճարի և աճուրդի մասնակցության վճարի մուծման անդորագիրը:

31.Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

32.Աճուրդում վաճառված անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման:

33.Աճուրդը համարվում է չկայացած,եթե.

1/ աճուրդին մասնակցության համար հայտ չի ներկայացվել

2/ աճուրդի սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է հողամասը ձեռք բերելուց կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում

3/ աճուրդում հաղթած անձը չի կնքել առք ու վաճառքի պայմանագիր և (կամ) չի մուծել գնման գինը:

34.Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

35.Աճուրդը և կրկնաճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում նոր աճուրդը կազմակերպու և անցկացնում է սույն կանոնակարգի և (կամ) համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

36.Սույն կանոնակարգի կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

III. ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ /ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ/ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

37.Աճուրդային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
38.Նիստերն իրավազոր են,եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:
39.Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են,եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:
40.Աճուրդավարը և արձանագրողը նշանակվում է աճուրդի կազմակերպչի որոշմամբ:
41.Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝աճուրդը կայացած ճանաչվելու,աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 սեպտեմբերի 2021թվականի N 24-Ա

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերից աճուրդ-վաճառքի միջոցով օտարել՝ հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՄ

ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

Գեղաղիր համայնքի ավագանու 2021 թվականի

սեպտեմբերի 13-ի N24-Ա որոշման

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի կադաստրային ծածկագիրը	Հողամասի մակերեսը	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը (հազար դրամ)
1	Գեղաղիր	07-022-0140-0007	4.66233	գյուղատնտեսական	արոտավայր	1 574 000